գործելով, առատօրէն ոռոգում են Փէրիայի լեռնադաշտը և ապա հաւաքելով միանում են Զայենդէրուդին։ Այս բոլորը գաւառին տալիս են աւելի գրաւչութիւն, կազմելով ամբողջացած և ներդաշնակ գեղեցկութիւն։

Լեռներ։ Փէրիայում կանգնած են զանազան ուղղութեամբ մեծ և փոքր լեռներ, որոնք բազմաթիւ թեւեր և գագաթներ ունին, որոնցից նշանաւորներն են.— Արեւելքից՝ Դալանի գագաթը. Արեւմուտքից՝ Խոշկարու. Հիւսիսից՝ Ազապատի. Հարաւից՝ Բախտեարի լեռնաշղթան (Փոշթքուհ). բացի սրանցից աչքի են ընկնում նաև Հեթումի և Պուլուզի գագաթները։

Այժմ կգրեմ քեզ այդ լեռների մասին առանձին-առանձին։

1) Դալանի սար։ Սա փէրիայի ամենամեծ և գլխաւոր սարն է, որ խիստ ընդարձակ տարածութիւն է բռնում. սրա մի ոստը ձգւում է դէպի արեւմուտք՝ մինչև Թոմբինա պարսկաբնակ գիւղը, իսկ միւս ոստը հասնում է մինչև Զայենդէրուդ գետը, Փոլ Զամանխան կոչւած կամրջի և Մուսաբադ գիւղի մօտ։ Այս սարի գագաթին կայ մի սպիտակ օձանման քար, որ հեռւից նայողի վրայ օձի տպաւորութիւն է անում։ Գիւղացիներն այդ օձի մասին պատմում են հետեւեալ առասպելական աւանդութիւնը. Ս. Սարգիսը սարը բարձրանալիս հանդիպում է օձին, որն ուզում է թունաւորել, բայց Ս. Սարգիսը նրան տեղնուտեղը քար է դարձնում։ Սարը բաժանւում է մէջտեղից արեւելք-արեւմուտք ուղղութեամբ և ներկայացնում է իրանից մի նեղ ձորահովիտ, պճնազարդւած զուլալ աղբիւրներով և ճոխ բուսականութեամբ, ուր ամառը ճարակելու համար գալիս են հօտեր, ուղտերամակներ և այլն։

2) Խոշկարու սար։ Սա Բօրբօրուտի լեռների արեւելեան թեւերից մէկն է, որ ձգւում է մինչև Ախոռա և Սանգիքարան գիւղերի մօտ. Դալանից յետոյ երկրորդն է իր մեծութեամբ։ Այս սարից բղխում են առատ և սառնորակ ջրեր, որոնք ոլոր-մոլոր պտոյտներով ոռոգում են լեռնալանջերի և